ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՆՈՎ ՕՐՇՆՎԱԾ ՋՈՒՐԸ ԲԱԺԱՆՎԵՑ ԹԲԻԼԻՍՑԻՆԵՐԻՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում, ընդունված կարգի համաձայն, Նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնով թեմերում կատարվում է Ջրօրհնեքի արարողություն:

Հոկտեմբերի 20-ին Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կատարվեց Նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնով ջրի օրհնության կարգ:

Կիրակնօրյա Սուրբ Պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանը:

Հավարտ Սուրբ Պատարագի, Սրբազան Հայրը Նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը, որից հետո այն բաժանվեց հավատացյալներին:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Գիտե՞ք, արդյոք, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսաարարողակարգի կարեւոր եւ պարտադիր բաղադրամասն է վարագույրը, որի գործածումը դարերի պատմություն ունի:

Շատերս ենք, հավանաբար, նկատել, որ մեր եկեղեցիների խորանը ծածկող վարագույրները երկու գույն ունեն՝ կարմիր եւ կապույտ:

Մեր ընթերցողին հակիրճ ներկայացնենք, թե որն է գույներից յուրաքանչյուրի խորհուրդը:

Կարմիր (հրեղեն) վարագույրը Աստծուն բաժանում է հրեշտակներից, իսկ կապույտ (ջրեղեն) վարագույրը՝ հրեշտակներին բաժանում է ժողովրդից:

Ի դեպ, կա վարկած, որ ժամանակին եկեղեցում գործածվել են տարբեր վարագույրներ, որոնք ըստ անհրաժեշտության նկարազարդվել են: Սակայն Մեծ Եղեռնից հետո, ցավոք, վարագույրների նկարազարդման արվեստը դադարել է գոյություն ունենալ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարագույրի խորհրդաբանությունը պահպանված է նաեւ Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, թեեւ վերջին հիմնանորոգումից հետո, մի փոքր խաթարվել էր գունային խորհուրդը:

Սուրբ Գեւորգ եկեղեցում որոշ ժամանակ վարագույրներից մեկը՝ կապույտը՝ բացակայեց: Պատճառը՝ վերջինիս հնամաշ լինելն էր: Արդյունքում կապույտը հանվեց, իսկ կարմիրը նվիրվեց Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի փոխառաջնորդության եկեղեցիներից մեկին:

Արդեն 2015 թվականին, առաջնորդանիստ տաճարի վերանորոգմանը հաջորդող հանդիսավոր բացմանը, տեղադրվեց միայն մեկ նոր՝ կարմիր վարագույր: Դրանից հետո, մինչեւ 2023 թվականի վերջ, Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կիրառվում էր միայն կարմիր գույնի վարագույր:

Եվ ահա 2024 թվականին Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցին, վերստին ընդունեց իր գունային խորհուրդը եւ Սուրբ խորանը զարդարվեց կապույտ գույնի, գեղեցիկ զարդանախշված վարագույրով: Նախաձեռնողն ու բարերարը ծնունդով թբիլիսահայ, ներկայումս ռուսաստանաբնակ գործարար Վլադիմիր Չիրախովն էր, ով վարագույրը՝ որպես նվեր թբիլիսահայ հավատացյալներին մատուցեց Սուրբ Ծննդյան տոնի նախաշեմին եւ տոնական Սուրբ Պատարագ մատուցվեց վարագույրների գունային խորհրդաբանությանը համարժեք՝ կարմիր եւ կապույտ վարագույրների ներդաշնակությամբ:

Ի դեպ, վարագույրի ներսի ստորին հատվածում ասեղնագործված է արժանավոր հայորդու եւ բարերարի՝ Վլադիմիր Չիրախովի անունը:

Վերջում նշենք, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարագույրը, ըստ անհրաժեշտության, փակվում է միայն Սուրբ Պատարագի որոշակի պահերին, ինչպես նաեւ Մեծ պահքի շրջանում՝ դրանով հիշեցնելով ապաշխարողներին, որ ադամական մեղքի հետեւանքով մարդը վտարվել է դրախտից...

ՄԱՐԻԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«ՃԱԿԱՏԱԳՐԻ ԳԵՂԱՐԴԸ» ԿՐՈՆԱԿԱՆ ԴԵՏԵԿՏԻՎԸ ՎԻՐԱՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ

2024 թվականի հոկտեմբերի 21-ին, Վիրահայոց թեմի «Հովհ.Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, Թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի օրհնությամբ կայացավ «Ճակատագրի գեղարդը» գրքի շնորհանդեսը:

Գիրք, որի առանցքում հրաշագործ գեղարդի անհայտացման եւ դրա վտանգավոր որոնման պատմական արկածախնդրային իրադարձություններն են:

Գրքի շնորհանդեսին անձամբ ներկա էր գրքի հեղինակ՝ փաստաբան, Ռուսաստանի գրողների միության անդամ, Ռուսաստանի եւ Նախիջեւանի թեմի իրավաբանական օգնության կենտրոնի ղեկավար, փաստաբանության ոլորտում Ազգային մրցույթի 2021 թվականի «Ոսկե գրիչ» անվանակարգի դափնեկիր Ռուբեն Մարգարյանը:

Շնորհանդեսի բացման խոսքից եւ Տերունական աղոթքից հետո՝ գրքի հեղինակը ներկայացրեց կրոնական դետեկտիվի ժանրով վեպ գրելու դրդապատճառը, գեղարդի որոնման հետաքննությունը ներկայացնելու իր որոշումը: Նրա գրչի ներքո գեղարվեստորեն բացահայտվել են այն երեւույթը եւ իրադարձությունները, որոնք փաստացի ամրագրված են հայ ժողովրդի հոգեւոր կյանքի պատմությունում:

Անշուշտ, հետաքրքրությունը մեծ էր, ինչն ակնհայտորեն դրսեւորվեց հեղինակին ուղղված տարբեր հարցերով, որոնք առնչվում էին թրիլլերի ժանրով գրված «Ճակատագրի գեղարդը» վեպի գլխավոր հերոսներ քահանայի, սարկավագի եւ իրավաբանի կողմից Գերմանիայում, Ֆրանսիայում ծավալված գործունեության, Հայաստանի տարբեր եկեղեցիներում ու վանքերում տեղի ունեցած հերոսների իրադարձությունների հետ:

Շնորհանդեսին ներկա Փարիզի «Սուրբ Հովհաննես» եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Նարեկ քահանա Ղուշչյանը բարձրաձայնեց հեղինակի մտահղացումը՝ կրոնական դետեկտիվը անպայման նաեւ վիրահայ ընթերցողին ներկայացնելու մասին, իսկ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը շնորհակալություն հայտնեց հեղինակին՝ իր արդեն երրորդ գրքի շնորհանդեսը բազմաթիվ այլ քաղաքներից հետո նաեւ Թբիլիսիում իրականացնելու համար:

Միջոցառման ավարտին՝ Ռուբեն Մարգարյանն իր մակագրությամբ «Ճակատագրի գեղարդը» գիրքը նվիրեց ներկաներին:

ՆԱՄԱԿ՝ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԲԺՇԿՈՒՀԻ ՎԵՆԵՐԱՆ

Վեներա Մահտեսյան

Ծնունդով Ախալքալաքիի շրջանի Օլավերդ գյուղից Վեներա Ավետիսի Մահտեսյանը, 1978 թվականին հաջողությամբ ավարտելով Երեւանի պետական բժշկական ինստիտուտը, որպես թերապեւտ բժիշկ աշխատանքի է անցնում Ախալքալաքիի մունիցիպալային հոսպիտալում, որի տնօրենը Վրաստանում ճանաչված վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր Ալեքսան Թորոյանն է:

Երիտասարդ Վեներան, հավատարիմ մնալով բժշկապետ Հիպոկրատի երդմանը, փորձ ու հմտություն ձեռք բերելով, արժանանում է մեր շրջանի բուժառուների վստահությանն ու համակրանքին:

Տարիների ընթացքում բժշկուհին դառնում է հիվանդանոցի անվանի բժիշկներից մեկը:

Այն հարցին, թե ի՞նչ ապրումներ է ունենում ծանր, չբուժվող հիվանդների բուժման ընթացքում, պատասխանում է.

- Չկան չբուժվող հիվանդություններ, կան չբուժվող հիվանդներ... Ես հոգեբանորեն ազդում եմ, համոզում, որ իմ ճիշտ ախտորոշումն ու նշանակումներն անպայման կօգնեն, եւ հիվանդներն արիանում են, մեծ մասամբ բուժվում... Դա իմ հաջողությունն է...

Այո՛, բժշկուհի, Ձեր հաջողությունների եւ բժշկական հմտությունների մասին գիտեն շատերը եւ այսօր, արդեն իսկ լիարժեք առողջացած նրանք՝ Ձեր նախկին բուժառուները, «Վրաստան» թերթի էջերից եւս հայտնում են իրենց խորին շնորհակալությունը եւ երախտագիտությունը՝ մաղթելով իրենց սիրելի բժշկուհուն երկար ու երկար տարիների անխափան առաքելություն:

ԳԵՎՈՐԳ ՀԱՅԱՍԱ
Գրող, հրապարակախոս, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ

Ախալքալաքիի մունիցիպալիտետ գյուղ Մերենիա

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ»՝ ԵՐԿՐԻ ԽԱՂԱՂ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԻԱԿ ԵՐԱՇԽԻՔ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թբիլիսիում էին գտնվում նաեւ Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի, Թեթրիծղարոյի, Վրաստանի հայաբնակ մյուս երկրամասերի առանձին բնակավայրերի ներկայացուցիչները, մունիցիպալիտետների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, երկրամասային վարչակազմերի անդամները...

Թբիլիսյան հանրահավաքի մասնակիցների առջեւ, «Վրացական երազանքի» կողմից անցած 12 տարիներին իրականացված եւ առաջիկայի համար նախատեսված ծրագրերի հանրագումարով, ելույթ ունեցան «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Ղարիբաշվիլին, կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, գործադիր քարտուղար Մամուկա Մդինարաձեն, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին: Հանրահավաքի մասնակիցների առջեւ ելույթ ունեցավ նաեւ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադիր եւ պատվավոր նախագահ Բիձինա Իվանիշվիլին:

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԻՐ ԱՐԺԱՆԻ ՏԵՂԸ ԿԳՐԱՎԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ»

Հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի հանրահավաքին, «Վրացական երազանք» կուսակցության պատվավոր նախագահ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ չնայած առաջընթացին ու որակապես բարելավված վիճակին, իհարկե, կառավարող թիմը շատ լավ հասկանում է, որ ժողովրդի ու երկրի բարեկեցությունն ապահովելու համար շատ ծանր աշխատանք է սպասվում, սակայն ոչինչից չպետք է վախենալ, չպետք է ընկրկել...

- Հետո ի՞նչ, եթե մենք փոքր երկիր ենք եւ հարուստ չենք բնական պաշարներով, մեր հարստությունը մեր ժողովուրդն է, մեր տքնաջան աշխատանքը եւ այն զարմանալի համառությունը, որով Դավիթը հաղթեց Գոլիաթին: Վրաց ժողովրդի հետ միասին, մեր երկրի բնակչությունը, «Վրացական երազանքը»՝ երկրի միակ պատասխանատու քաղաքական ուժը, կկարողանա արժանապատվորեն առաջնորդել Վրաստանին այս դժվարին ճանապարհին՝ զարգացած, հարուստ, ժողովրդավարական, առաջադեմ երկրների մեջ զբաղեցնելու մեր արժանի տեղը: Սակայն կա մեկ հիմնարար կարեւորություն, որը սահմանում եւ պայմանավորում է մեր երկրի համար ամեն ինչ:

Ի՞նչ գին ունի խաղաղությունը, մեզ լավ է սովորեցրել մեր երկրի պատմությունը, ներառյալ ոչ հեռավոր անցյալը: Ընդամենը երեք տասնամյակ առաջ Թբիլիսիում, քաղաքի սրտում, վրացիները կրակում էին միմյանց: Էլ չեմ խոսում 90-ականների ռազմական հակամարտությունների ու 2008-ի ողբերգության մասին, որը «Ազգային շարժումը» բերեց երկիր:

Եվ սա եւս մեկ սկզբունքային տարբերություն է «Ազգային շարժման» ռեժիմի եւ 2012 թվականի հոկտեմբերի 1-ին ծնված Վրաստանի ժամանակաշրջանի միջեւ. «Վրացական երազանքը» կարողացավ անել գործնականում անհնարինը՝ պահպանեց խաղաղությունը:

Պետականորեն մտածող եւ ողջամիտ ցանկացած մարդ կհամաձայնի, որ խաղաղության պահպանումը կենսական նշանակություն ունի մեր երկրի համար՝ հաշվի առնելով այն մարտահրավերները, որոնց բախվում է Վրաստանը տարածաշրջանում շարունակվող ռազմական հակամարտությունների ֆոնին: Երկրի զարգացումը հնարավոր է միայն խաղաղության պայմաններում եւ դրա վկայությունն է այն հաջողությունը, որին հասել է «Վրացական երազանքի» կառավարությունը շարունակական խաղաղության այս 12 տարիների ընթացքում,- ասաց Բիձինա Իվանիշվիլին:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «2030 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՄԲ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԿԴԱՌՆԱՆՔ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ»

Հանրահավաքին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն իր խոսքում անդրադարձավ Եվրամիությանը Վրաստանի անդամակցությանը, ընդգծելով, որ Եվրոպային հարիր չէ այն անարդարությունը, որը մենք այդքան հաճախ լսում ենք Եվրամիության քաղաքական գործիչներից եւ պաշտոնյաներից, Եվրոպային հարիր չէ քրիստոնեական դոգմաների մերժումը, ԼԳԲՏ քարոզչությունը, Եվրոպային հարիր չէ անթափանցիկությունը եւ ուրիշների ինքնիշխանության հանդեպ անհարգալից վերաբերմունքը:

Վարչապետի խոսքով, մինչեւ 2030 թվականը Վրաստանը Եվրամիության անդամ կդառնա միայն արժանապատվությամբ, քրիստոնեության, եկեղեցու եւ բարոյականության նկատմամբ հարգանքով:

- Մինչեւ 2030 թվականը մենք Եվրամիության անդամ կդառնանք միայն արժանապատվությամբ, հարգելով քրիստոնեությունը, եկեղեցին եւ բարոյականությունը, անկախությունն ու ինքնիշխանությունը: Դեպի Եվրոպա միայն արժանապատվությամբ. սա այն քաղաքականությունն է, որը սահմանել է պարոն Բիձինա Իվանիշվիլին, եւ ես ուզում եմ մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնել նրան դրա համար: Առանց խաղաղության չկա ո՛չ զարգացում, ո՛չ եվրաինտեգրում: Անցած չորս տարիների ընթացքում մենք դիմակայել ենք ամենածանր ճնշումներին ու շանտաժին, եւ չնայած ամենամեծ ռիսկերին՝ պահպանել ենք երկիրի խաղաղությունը: Մեր կառավարությունը անկախության վերականգնումից հետո առաջին կառավարությունն է, որի օրոք երկիրը պատերազմ չի ունեցել: Մենք Վրաստանում պահպանել ենք 12 տարվա անխափան խաղաղություն, եւ նույնիսկ հիմա «Վրացական երազանքը» միակ երաշխիքն է, որ երկիրը կշարունակի իր խաղաղ եւ կայուն զարգացումը բոլոր ուղղություններով: Մեր ընդդիմախոսները հաճախ փորձում են հասարակության մեջ սերմանել այն սխալ գաղափարը, որ Վրաստանը կարող է բարձր եկամուտ ունեցող երկիր դառնալ միայն նրանից հետո, երբ անդամակցենք Եվրամիությանը: Իրականում ամեն ինչ հակառակն է՝ Վրաստանը կարող է ընդունվել Եվրամիություն միայն նրանից հետո, երբ դառնա բարձր եկամուտ ունեցող երկիր,- ասաց Կոբախիձեն:

ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՁԻՋԵԼ ՀԱՅՐԵՆԻՔ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ»

Քարոզարշավի եզրափակիչ հանրահավաքին՝ «Վրացական երազանք» կուսակցության գլխավար քարտուղար Կախա Կալաձեն իր խոսքում հիմնականում անդրադարձավ հավաքական «Ազգային շարժման» հակազգային, հակապետական, ապակայունացնող, հանրության պառակտմանն ուղղված գործունեությանը, նշելով, որ դավաճանները չեն կարող վերադառնալ իշխանություն, եթե

չեն սիրում իրենց հայրենիքը՝ մենք չենք կարող մեր հայրենիքը զիջել հայրենիք չունեցողներին, շեշտեց նա:

Կախա Կալաձեի հավաստմամբ, անհայրենիքն ավելի վտանգավոր է, քան թշնամին, քանի որ ստորագրում է ամեն տեսակ կեղտի տակ:

- Ուզում եմ հիշել, թե 2012 թվականին ինչ որոշիչ դեր խաղաց Թբիլիսին երկրի կյանքում: Բիձինա Իվանիշվիլիի շուրջ համախմբված վրաց ժողովուրդը հրաժարվեց բռնությունից, դաժանությունից, ստից ու կեղծիքից: Եվ այսօր էլ, ցավոք, նման ճնշումներով ու շանտաժով փորձում են նրանց վերադարձնել իշխանության: Նրանք ուղղակիորեն միջամտում են ընտրություններին, երկրի քաղաքական կյանքին: Արտաքին ուժերը չեն կարողանում հարմարվել այն փաստին, որ Վրաստանը չի կիսել Ուկրաինայի ճակատագիրը, չի միացել պատժամիջոցներին: Մեզ պնդում են, որ սպիտակը սեւ է, թափանցիկությունը հակաժողովրդավարական է, իսկ ԼԳԲՏ քարոզչությունը մարդասիրության եւ ազատականության դրսեւորում է: Մեզ ասում են, որ արմատականները, որոնք կոչվում են հասարակական կազմակերպություններ, իրավունք ունեն միջոցներ ստանալ, օգտագործել այս ամենը մարդկանց հակադրելու, հեղափոխություններ կազմակերպելու, ծայրահեղականությանը ֆինանսավորելու համար, եւ պարզվում է, որ վրաց ժողովուրդը չպետք է այս մասին ոչինչ իմանա: Ես ուզում եմ դիմել այստեղի մանր արմատականներին եւ սադրիչներին, որ այսպես շարունակվել չի կարող: Անհայրենիք, դավաճան մարդիկ չեն կարող վերադառնալ իշխանության, Վրաստանը չի վերադառնա անցյալ: Միայն խաղաղություն, միայն հաղթանակով դեպի Եվրոպա: Նրանց կառավարումը Վրաստանին բերեց բազում դժբախտություններ, որոնք վրաց ժողովուրդը չի մոռանա եւ թույլ չի տա, որ արտաքին ուժերի շահերի պատճառով երկիրը նորից ներքաշվի պատերազմի կրակի մեջ: Եթե դու չես սիրում քո հայրենիքը, ինչպե՞ս կարող ես սիրել եւ հարգել մեկ այլ երկիր: Անհայրենիքն ավելի վտանգավոր է, քան թշնամին, քանի որ նա ստորագրում է ամեն տեսակ կեղտի տակ,- ասաց Կախա Կալաձեն:

ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԸ ՓՐԿԵՑԻՆՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԵՎ ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ,»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, «Վրացական երազանքի» թբիլիսյան հանրահավաքին, իր խոսքում առանձնակի կանգ առավ խաղաղության պահպանման համար իշխանության գործադրած ջանքերի վրա, նշելով, որ 2022 թվականին իրենք Վրաստանը փրկեցին պատերազմից եւ ավերածություններից, պատերազմ, որը վերջնականապես կփշրեր Վրաստանի քաղաքացիների հույսերն ու երազանքները, իսկ ազատ ու անկախ Վրաստանը միայն պատմության գրքերի մեջ կհայտնվեր:

- Երբ հարցրինք, թե պատժամիջոցներին միանալու արդյունքում առաջացած տնտեսական բարդությունների դեպքում տնտեսական կամ ֆինանսական երաշխիքներ տալի՞ս են, պատասխանն էր՝ ոչ: Երբ հարցրինք, եթե այս էսկալացիան վերաճի պատերազմի, մեզ անվտանգության երաշխիքներ տալի՞ս են, պատասխանը կրկին ոչ էր: Երբ հարցնում էինք, ի՞նչ է մենք մեզ պարզապես զոհաբերելու ենք՝ լռություն էր: Լռություն, որն ավելին է, քան պատասխանը: Հետո մեզ կանգնեցրին ընտրության առջեւ՝ կա՛մ ներս մտեք կա՛մ դուրս եկեք: Սակայն մենք չընկրկեցինք, որովհետեւ մեր թիկունքում կանգնած էր մեր ժողովուրդը, որովհետեւ մեր թիկունքում կանգնած էին մեր աբխազ եւ օս հայրենակիցները, որոնց արյունահեղությանն էին մեզ մղում՝ նորից տանելով դեպի Սուխումի եւ Ցխինվալի: Դա ընտրություն էր պատերազմի եւ խաղաղության, ավերածությունների ու կառուցման, պետականության կորստի եւ ինքնիշխանության ամրապնդման միջեւ: Ուստի, մենք պետք է հաղթենք սահմանադրական մեծամասնությամբ, որպեսզի ոչ ոք չհամարձակվի մեզ ներքաշել անկարգությունների մեջ, եւ մենք կարողանանք խաղաղ պայմաններում միավորել մեր երկիրը,- ասաց Շալվա Պապուաշվիլին:

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ BRICS ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Հոկտեմբերի 24-ին, աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ռուսաստանի Կազան քաղաքում մասնակցեց BRIC գագաթնաժողովին:

Հայաստանի վարչապետի խոսքով, Կազանում BRICS գագաթնաժողովին բարձր մակարդակով ներկա գտնվելը կարեւոր է Հայաստանի համար, մանավանդ, որ BRICS գագաթնաժողովը վերաբերվում է գլոբալ հարավի խնդիրներին:

Վարչապետի կարծիքով՝ BRICS գագաթնաժողովը հնարավորություն է տալու այդ թվում՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը ներկայացնելու համար:

- Ոչ պակաս շարժառիթ նաեւ, որ հրավեր եմ ստացել ՌԴ նախագահից անձամբ եւ ընդունել եմ այդ հրավերը: Կարծում եմ, որ այնտեղ գտնվելը կարեւոր է Հայաստանի Հանրապետության համար,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Կազանում, գագաթնաժողովի շրջանակներում, Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ:

Զրուցակիցները քննարկեցին երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց տնտեսության, էներգետիկայի, ենթակառուցվածքների ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցերի:

Մտքեր են փոխանակվել տարածաշրջանային եւ միջազգային նշանակության հարցերի շուրջ: Զրուցակիցները կարեւորեցին խաղաղության եւ կայունության ապահովման ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացումը: Հայաստանի եւ Իրանի ղեկավարները համոզմունք են հայտնել, որ երկկողմ ամուր եւ խորը հարաբերությունները կնպաստեն տարածաշրջանային փոխգործակցության զարգացմանը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «300 ԴՊՐՈՑ, 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Հոկտեմբերի 23-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, անցկացվեց խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեց կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի կատարման ընթացքը:

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի հայտարարությամբ, ընդհանուր առմամբ, ավարտվել կամ իրականացման տարբեր փուլերում են գտնվում 223 դպրոցի եւ կրթահամալիրի կառուցման, հիմնանորոգման եւ վերանորոգման աշխատանքները: Ըստ այդմ՝ կառուցման աշխատանքը վերաբերում է 183 դպրոցի, հիմնանորոգման աշխատանքը՝ 17, նորոգման աշխատանքը՝ 23 դպրոցի: 223 դպրոցները, ըստ աշակերտական հզորության, 72 հազար են, իսկ 300 դպրոցի դեպքում աշակերտների թիվը կլինի 100 հազարից ավելի:

Փոխվարչապետի զեկուցմամբ, ընդհանուր առմամբ, ավարտվել եւ իրականացման տարբեր փուլերում են գտնվում 364 մանկապարտեզի եւ նախակրթահամալիրների կառուցման ու հիմնանորոգման աշխատանքները: Ըստ այդմ՝ 157 մանկապարտեզում աշխատանքներն ավարտված են, 207-ում՝ ընթացքի մեջ են:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 342 մլրդ դրամ:

ԱՌԱՆՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ «3+3» ՁԵՎԱՉԱՓՈՎ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ԸՆԴՈՒՆՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 20-ին, Ստամբուլում, անցկացվեց «3+3» ձեւաչափով թվով երրորդ հանդիպումը, որին մասնակցեցին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը, Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը եւ Իրանի արտաքին գործերի նախարար Սեյեդ Աբբաս Արաղչին: Վրաստանը հրաժարվեց մասնակցել հանդիպմանը:

Նախարարները նախ վկայակոչեցին «3+3» ձեւաչափով տեղի ունեցած նախորդ հանդիպումները, որոնք անցկացվել են Մոսկվայում եւ Թեհրանում: Ընդգծեցին «3+3» տարածաշրջանային համագործակցության հարթակում հերթական հանդիպման անցկացման կարեւորությունը՝ ներկայիս բարդ զարգացումների պայմաններում, որոնք սպառնում են տարածաշրջանային եւ միջազգային խաղաղությանը եւ կայունությանը եւ պայմանավորվեցին շարունակել համագործակցությունը «3+3» ձեւաչափի շրջանակներում:

Տարածաշրջանային երկրների առաջնային դերին համահունչ, կարեւորելով երկխոսությունը, օգտվելով տարածաշրջանային համագործակցության հնարավորություններից եւ միջազգային կարեւորագույն հարցերի շուրջ անկեղծորեն երկխոսելու կարողությունից՝ քննարկեցին տարածաշրջանին հուզող չլուծված խնդիրները:

Գոհունակությամբ արձանագրեցին տարածաշրջանի բոլոր երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման ու զարգացման դրական դինամիկան:

Համաձայնեցին, որ երկկողմ բանակցությունները լրացնելու են կայուն տարածաշրջանային խաղաղության եւ տնտեսական զարգացմանն ուղղված բազմակողմ խորհրդակցությունները:

Վերահաստատեցին, որ «3+3» հարթակի դռները միշտ բաց կլինեն Վրաստանի միանալու համար:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ ԿՏՐՈՒԿ ԱՃ

Հայաստանում 2023 թվականին գրանցված հանցագործությունների թիվը, 2019 թվականի հետ համեմատած, աճել է 13 816-ով կամ 51.4 տոկոսով:

Հայաստանի Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, հանդես գալով խորհրդարանական լսումներին, խոսեց հանցավորության վիճակի, բարեփոխումների արդյունքների վերաբերյալ:

- 2019-2024 թվականների ընթացքում մեր հանրապետությունում գրանցված հանցագործությունների թվային ցուցանիշները հետեւյալն են՝ 2019 թվականին՝ 26 850, 2020 թվականին՝ 26 468, 2021 թվականին՝ 30 245, 2022 թվականին՝ 37 612, 2023 թվականին՝ 40 666, 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին՝ 24 567: 2023 թվականին գրանցված հանցագործությունների թիվը, 2019 թվականի հետ համեմատած, աճել է 13 816-ով կամ 51.4 տոկոսով,- ասաց դատախազը:

Աննա Վարդապետյանի խոսքով՝ արձանագրված հանցագործությունների բացարձակ մեծամասնությունը ոչ մեծ եւ միջին ծանրության հանցագործություններ են, այսինքն՝ նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող:

- 2019-2023 թվականների ընթացքում թեեւ արձանագրվել է ծանր հանցագործությունների թվային աճ (1626-ով կամ 36.2 տոկոս), վերջիններիս տեսակարար կշիռն ընդհանուր հանցավորության մեջ նվազել է 1.7 տոկոսով,- նշեց նա՝ հավելելով, որ, 2024 թվականի առաջին 8 ամսվա ընթացքում, նախորդ տարվա հաշվետու ժամանակահատվածի հետ համեմատած, արձանագրվել է ծանր հանցագործությունների նվազում 437-ով կամ՝ 11.6 տոկոսով: Առանձնակի ծանր հանցագործությունների դեպքերն ավելացել են 16-ով կամ 4.5 տոկոսով:

Առանձնակի ծանր հանցագործությունների թիվը (առանց հանկարծամահությունների հաշվառման) 2023 թվականին կազմել է 546, 2019 թվականի հետ համեմատած՝ աճելով 262-ով կամ 92.2 տոկոսով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ» ԹԵՄԱՅՈՎ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, հոկտեմբերի 23-ին մեկնարկեց եւ մինչեւ հոկտեմբերի 25-ը կշարունակվի միջազգային գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը. տասնամյակների անավարտ պայքարի հիշողական, քաղաքական եւ աշխարհաքաղաքական ուղենիշները» թեմայով:

Գիտաժողովին մասնակցկում են շուրջ երեսուն գիտնական՝ Հայաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Բելգիայից, Գերմանիայից, Լեհաստանից, Լիբանանից, Բրազիլիայից, Արգենտինայից, Նոր Զելանդիայից, Հնդկաստանից, Ավստրալիայից, Իռլանդիայից, Ֆինլանդիայից եւ Իսպանիայից:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, հոկտեմբերի 21-22-ին, Երեւանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, կայացավ Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկո:

Հոբելյանական երեկոյի կազմակերպիչներն են Հայաստանի պետական ֆիլհարմոնիան եւ Փոքր թատրոնը:

Երեկոյի ռեժիսորն է Վահան Բաղալյանը, տեսաշարը՝ Ալբերտ Մովսիսյանի, Լուսինե Չերգեշյանի, երաժշտությունը՝ Սերգեյ Ումրոյանի:

Սերգեյ Փարաջանովի 100-ամյակի հոբելյանն ընդգրկված է Հայաստանի կառավարության հոբելյանական միջոցառումների ծրագրում եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025թթ. օրացույցում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆԸ 100 ԴՐԱՄԱՆՈՑ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՈՎ ԿԱՄ QR ԿՈԴՈՎ ՎՃԱՐՈՒՄՆ Է

Նոյեմբերի 1-ից հասարակական տրանսպորտից, մասնավորապես՝ MAN, ZhongTong եւ GazelCity մակնիշի փոխադրամիջոցներից օգտվելիս՝ պարտադիր պայման է լինելու 100 դրամանոց մետաղադրամի առկայությունը կամ ավտոբուսներում տեղադրված վճարային համակարգով QR կոդի միջոցով վճարում իրականացնելը:

Այս փոփոխության նպատակը հունվարի 1-ից սպասվող միասնական տոմսային համակարգին սահուն անցում կատարելն է, որից հետո ուղեւորներին կառաջարկվեն մշտական օգտագործման քարտեր, բանկային քարտեր, բջջային հավելվածով վճարումներ:

Երեւանի քաղաքապետարանից հիշեցնում են, որ այն ուղեւորները, ովքեր երբեք չեն գնել QR ուղեփոխ Telcell Wallet-ով, ապա, հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, գնելով առաջին QR ուղեփոխը, Telcell Wallet հավելվածում կստանան 10 անվճար QR ուղեփոխ (ավտոբուս/մետրո):

Նվերը միանվագ է ու հասանելի է միայն առաջին անգամ QR ուղեփոխ գնած օգտատերերի համար:

ԵԿԵՂԵՑԻԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ

29.10.2024 Սեւերիանոս Սեբաստացու, Բաբելա Ծերունու եւ նրա ութսունչորս աշակերտների հիշատակության օր

31.10.2024 Հիշատակ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի

2.11.2024 Տոն բոլոր Սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների եւ անհայտների

Հայ Եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն Սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց Սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

ԿՐԹԱԿԱՆ

ԸՆՏՐՈՎԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հաղորդագրության համաձայն՝ ուսուցիչների աշխատավարձի կանոնակարգում փոփոխություն է տեղի ունեցել, ըստ որի, ընտրովի առարկաների դասավանդումը կփոխհատուցվի աշխատավարձի վճարման նոր կարգով:

«Աշակերտների մտահորիզոնի ընդլայնման եւ գիտելիքների հարստացման նպատակով՝ ազգային ուսումնական պլանը միջնակարգ մակարդակում սահմանում է ընտիր առարկաների բազմազան ցանկ, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս դպրոցին՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները, կազմել այլ դասընթաց եւ, նախարարության հետ համաձայնեցնելուց հետո, ներառել ուսումնական գործընթացում:

Ընտրովի դասընթացները կվճարվեն աշխատավարձի նոր կարգով.

Դա վերաբերում է նաեւ օտար լեզուների խմբում ընդգրկված բոլոր առարկաներին եւ այն ընտրովի առարկաներին, որոնք ներառում են երկու կամ ավելի առարկայական խմբեր (օրինակ՝ մեդիագրագիտություն)»,- ասված է նախարարի հրամանում:

Աշխատավարձի նոր բանաձեւի համաձայն՝ 2024 թվականի հուլիսից հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը կախված է ոչ թե ուսուցչի կարգավիճակից (ավագ, ղեկավար, մենթոր), այլ աշխատանքային ժամային ծանրաբեռնվածությունից:

Աշխատավարձի նոր բանաձեւի համաձայն՝ նախարարությունը չեղյալ է համարել ուսուցիչների կարգավիճակի հավելավճարը եւ բարձրացրել ժամավճարը, ինչը հանգեցրել է որոշ ուսուցիչների դժգոհությանը:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՍԱՄՏՐԵԴԻԱՅՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵԻ ԱՆՎԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբերի 18-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, Սամտրեդիայում մասնակցեց Կախա Կալաձեի անվան նոր ֆուտբոլային կենտրոնի բացման արարողությանը:

Կառավարության ղեկավարը շնորհավորեց սամտրեդիացիներին՝ ֆուտբոլային համալիրի բացման կապակցությամբ:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիային, Ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլուն, ինչպես նաեւ ՖԻՖԱ-ին եւ ՈՒԵՖԱ-ին՝ նախագծին աջակցության եւ ծրագրի իրականացման մեջ ներգրավված բոլոր մարդկանց համար:

Նշենք, որ Սամտրեդիայի ֆուտբոլային կենտրոնում կազմակերպվել են երկու ստանդարտ չափերի, արհեստականորեն ծածկված դաշտեր՝ լուսավորությամբ եւ 200 հանդիսատեսի համար նախատեսված տրիբունայով: Կառուցվել է նաեւ վարչական շենք: Ֆուտբոլի նոր կենտրոնի բացման արարողությանը մասնակցել են Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլին, ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչներ:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ԱԽԱԼՔԱԼԱՔՅԻ ԳՈՌ ԱՅՎԱԶՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՌԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում եզրագիծը հատեց Եվրոպայի երիտասարդական առաջնությունը: Վրաստանը ներկայացնող 12 բռնցքամարտիկներն իրենց ակտիվում գրանցեցին մեկ ոսկե, մեկ արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներ:

Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց Ախալքալաքիի մարզադպրոցի սան, 23-ամյա Գոռ Այվազյանը: Նա մրցաշարի եզրափակիչում 4:1 առավելության հասավ հայաստանցի մարզիկ Ռուսլան Ասլիկյանի նկատմամբ եւ նվաճեց չեմպիոնի ոսկե մեդալը: Մինչ այդ, Գոռ Այվազյանը իր հաղթարշավի ճանապարհին առավելության հասավ Բուլղարիայի ներկայացուցիչ Նիկոլայե Մարինովի, ուկրաինացի Դենիս Ռոսդոլսկու, իռլանդացի Շայն Ռայենի եւ անգլիացի Լեոնարդո Վուդի նկատմամբ:

Նշենք, որ ախալքալաքցի Գոռ Այվազյանը արդեն չորրորդ անգամ արժանացավ Եվրոպայի չեմպիոնի կոչման: Մինչեւ 57 կգ քաշային կարգում Այվազյանը երկու անգամ արդեն եղել է Եվրոպայի պատանեկան առաջնության չեմպիոն, մեկ անգամ՝ Եվրոպայի երիտասարդական առաջնության հաղթող եւ ահա հիմա նա դարձավ Եվրոպայի U23 առաջնության չեմպիոն:

Վրաստանի հավաքականի ակտիվում բրոնզե մեդալը գրանցեց Գիորգի Գուցաեւը (86 կգ):

Աղջիկների երիտասարդական մրցաշարում ոսկե մեդալ նվաճելու լավ հնարավորություն ուներ Վրաստանի հավաքականի անդամ Թաթիա Բուկիան: Նա 81 կգ քաշային կարգում, եզրափակիչ մրցամարտում, զիջեց Ուկրաինայի ներկայացուցչին եւ բավարարվեց արծաթե մեդալով:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Հայ լեզվագետ, բացատրական բառարանի հեղինակ: 11.Մետաղամշակման հաստոցի տեսակ: 12.Կրկեսի ժամանակավոր շենք: 13.Լուսային հոսքի միավորը՝ ՍԻ համակարգում: 14.Գերմանացի ֆիզիկոս, քվանտային տեսության հեղինակ: 15.Արհեստավորի կահավորված սեղան: 19.Ուրարտական թագավոր: 23.Մարմնամարզիկ: 25. Շան կլանչոց, վնգստոց: 27.Տաք հագուստ: 28.Լիրիկական քնարերգության հովանավոր մուսան հունական դիցարանում: 29.Գաճաճ: 31.Ֆլորերի պատմավեպը: 37.Ժողովը իրավազոր ճանաչելու համար անհրաժեշտ ձայների քանակը: 38.Գերմանացի կոմպոզիտոր: 40.Ապացույց չպահանջող դրույթ: 41.Պայթուցիկ նյութ: 42.Վրացական ամենահայտնի մարզական ակումբը: 43.Ամռան ամիս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Օովային կաթնասուն: 2.Հանելուկի տեսակ: 3.Գերմանացի իդեալիստ փիլիսոփա: 5.Կենդանական եւ բուսական հյուսվածքների բաղադրիչ: 6.Իտալացի գրող, «Չիպոլինոյի արկածները» հեքիաթի հեղինակը: 7.Թրջված ու ծլած ցորեն, գարի: 8.Վրացական ֆուտբոլի վետերան ... Շենգելիա: 9.Ավստրալիական վայրի շուն: 10.Գյուղատնտեսական աշխատանքի տեսակ: 16.Տարբեր բույսերի խաչասերում: 17.Ռուս հոկեյիստ, Օլիմպիական չեմպիոն: 18.Զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող մի քանի ժողովուրդների հավատալիքներում՝ ցեղի նախահայրն ու հովանավորը համարվող ու պաշտպանմունքի առարկա դարձած կենդանի (երբեմն նաեւ բույս եւ այլն): 20.Վրաստանի պատմական երկրամասի բնակիչ: 21.Մետաքս արտադրող թրթուր: 22.Հաշվապահական հաշվեկշռի մի մաս: 24.Մանրահատիկ նստվածքային ապար: 26.Կերպարվեստի ժանր: 28.Եռատերեւ դաշտային ծաղկաբույս: 30.Երաժշտական գործիք: 32.Ալ.Դյումայի եռերգության հերոսներից: 33.Վրաստան վառելիք մատակարարող օտարերկրյա ընկերություն: 34.1981 թվականի Թբիլիսիի «Դինամոյի» կիսապաշտպան: 35.Քիմիական որեւէ տարրի միացությունը թթվածնի հետ: 36.Հայ մեծ բանաստեղծ: 38.Երկրաչափական մարմին: 39.Թումանյանի պոեմի հերոսներից:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հասմիկ: 4.Հայկ: 7.Ցին: 9.Կուր: 10.Երազ: 11.Ցասում: 12.Արտակ: 13.Մին: 15.Այրի: 16.Ելա: 18.Կուլա: 19,Խելոք: 20.Ինն: 21.Այն: 22.Եվրո: 25.Որ: 27.Կերպ: 28.Ատր: 29.Բայ: 31.Երթանք: 33.Ասր: 35.Մայն: 37.Լիրբ: 38.Շի: 39.Նադիր: 42.Բորշ: 43.Օբաամա: 47.Օձ: 49.Նեղոս: 50.Սվան: 51.Եզնիկ: 54.Ռե: 55.Արինա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հացեկաց: Սեսիլիա: 3.Իրմա: 4.Հուրի: 5.Արտ: 7.Ցամաք: 8.Իզի: 14.Նորայր: 17.Լոքո: 20.Իններորդ: 23.Վկա: 24.Որքան: 26.Ռաֆֆի: 29.Բակունց: 30.Յասոն: 32.Թամար: 34.Աբաշիձե: 36.Յամբ: 37.Լիբանան: 40.Ալմա: 41.Իռենա: 44.Արսեն: 46.Լենա: 48.Ցար: 52.Զա: 53.Կա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՎ ՄՈՆԱՄԱՐՏՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՏՈՐՅԵԼՈՒ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոռելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՍԱՀԱՐՈՎՅԵԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445